ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԼԻԱՆԱ ԿԱՉՅԱՆՑ ՍՊԸ-ն ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/64 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
11	Զաբոտա Դեզ Պլյուս	ԶԱԲՈՏԱԴԵԶ	Ախտահանիչ խտանյութ `նախատեսված բժշկական նշանակության գործիքների, էնդոսկոպների՝ ախտահանման, նախամանրէազերծումային և էնզիմատիկ մաքրման համար: Բաղադրությունը – ՉԱՄ, գուանիդինի ածանցյալներ, տրիամիններ, ֆերմենտներ (ամիլազա, պրոտեազա, լիպազա), ինչպես նաև ոչ իոնոգեն ՄԱՆ (մակերեսային ակտիվ նյութեր), կոռոզիայի ինհիբիտորներ, բուրանյութ (ընտրողաբար) և այլ ֆունկցիոնալ հավելումներ, ջուր: Առաջարկվող ախտահանիչ նյութը իր բաղադրությունում չի պարունակում որպես ակտիվ բաղադրիչներ քլոր, ալկոհոլ: Փաթեթավորումը- 1լիտրանոց տարաներով: 1լիտր խտանյութից պատրաստվում է մինչև 0,4%-անոց 250 լիտր աշխատանքային լուծույթ, որը կապահովի հակամանրէային ակտիվությամբ գրամբացասական և գրամդրական մանրէների (ներառյալ աղիքային վարակները՝ թեստավորված Escherichia coli, Salmonella typhimurium-ի վրա, ներհիվանդանոցային վարակների հարուցիչները՝ թեստավորված Pseudomonas aeruginosa, Staphylococcus aureus-ի վրա, հատուկ վտանգավոր վարակները՝

			ժանտախտի, խոլերայի, տուլարեմիայի, սիբիրյան խոցի և այլ, անաէրոբ վարակները, լեգիոնելոզի հարուցիչները և տուբերկուլոզի միկոբակտերիան՝ թեստավորված Mycobacterium terrae-ի վրա), վիրուսների (ներառյալ ռինովիրուսները, նորովիրուսները, ռոտավիրուսները, կորոնավիրուսները, այդ թվում SARS-CoV-2, ադենովիրուսները, ընդերային և արտաընդերային հեպատիտների, այդ թվում՝ Ա, Բ, Ց, Ե հեպատիտի, պոլիոմիելիտի, ՄԻԱՎ վիրուսները, մարդու գրիպի, պարագրիպի վիրուսները, այդ թվում՝ «թռչնի» H1N1 և «խոզի» H5N1, «ատիպիկ թոքաբորբի» (SARS) վիրուսները, հերպեսի, ցիտոմեգալովիրուսային վարակի և այլ վիրուսները), Կանդիդա, Տրիխոֆիտոն ցեղի ախտածին սնկերի, բորբոսասնկերի (թեստավորված Aspergillus niger-ի վրա) նկատմամբ, սպորոցիդ ակտիվությամբ (թեստավորված Bacillus cereus-ի և Bacillus subtilis-ի վրա)։ Միջոցն օժտված է օվոցիդ հատկությամբ մակաբուծային հիվանդությունների հարուցիչների (նախակենդանիների ցիստերի և օոցիստերի, հելմինթների ձվերի և թրթուրների) նկատմամբ։ Միջոցն օժտված է ապաբաղարկիչ ակտիվությամբ ՌՆԹ/ԴՆԹ ամպլիկոններով բաղարկված օբյեկտների նկատմամբ ազդեցությունը մինչև 15 րոպեում ։ Միջոցն օժտված է երկարաձգված հակամանրէային ազդեցությամբ՝ առնվազն 24 ժամ։ Աշխատանքային լուծույթի պատրաստման համար պահանջվող ջերմաստիճանը պետք է առնվազն 18°C ։ Աշխատանքային լուծույթի պիտանելիությունը 50 օր է, նախատեսված է բազմակի օգտագործման համար։ Ախտահանիչ նյութի pH - 8,0։ Ունի որակի հավաստագիր, ԵԱՏՄ պետական գրանցման վկայական, ՀՀ ԱՆ օգտագործման մեթոդական հրահանգ։ Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ ընդհանուր պիտանելության ժամկետի առնվազն՝ 75%։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ЛИАНА КАЧЬЯНЦ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՅԱՉ-ԷԱՃԱՊՁԲ-26/64 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
11			